ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2018թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՋԱՆԻԲԵԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀԽՍՀ վաստակավոր տնտեսագետ Ջանիբեկ Եղիազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Արամ Խաչատրյան փողոց հ. 21 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԶԱՆԻԲԵԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԽՍՀ վաստակավոր տնտեսագետ, Հայրենական Մեծ պատերազմի մասնակից Զանիբեկ Եղիազարյանը ծնվել է 1918թ. ապրիլի 19-ին Ապարանի շրջանի Վարդենիս գյուղում: 1935թ. ավարտել է Վարդենիսի միջնակարգ դպրոցը, 1950թ.՝ Մոսկվայի ֆինանսական ինստիտուտը:

1939-1946թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1941-1945թթ. մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին:

1936-1938թթ. եղել է ՀԼԿԵՄ Ապարանի շրջկոմի 2-րդ քարտուղար, 1946-1950թթ.՝ Ապարանի գյուղբանկի լիազոր, 1950-1953թթ.՝ Հայաստանի գյուղբանկի վարկավորման բաժնի վարիչ, 1953-1969թթ.՝ Հայաստանի պետբանկի կոլտնտեսությունների վարկավորման վարչության պետ, 1969-1978թթ.՝ Հայաստանի պետական բանկի կառավարչի տեղակալ:

1978-1990թթ. աշխատել է ՀԽՍՀ գյուղատնտեսության նախարարությունում՝ որպես բաժնի պետ, ապա՝ ՀԽՍՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության բաժնի պետ: 1995-1999թթ. աշխատել է «Կրեդիտ-Երևան» բանկում՝ որպես վարչության նախագահի խորհրդական:

1968թ. Զանիբեկ Եղիազարյանն արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր տնտեսագետի կոչման: 1985թ. պարգևատրվել է Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով:

Զանիբեկ Եղիազարյանը մահացել է 2000թ. դեկտեմբերի 1-ին Երևանում:

ՀԽՍՀ վաստակավոր տնտեսագետ Զանիբեկ Եղիազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Արամ Խաչատրյան փողոց հ. 21 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԶԱՆԻԲԵԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Զանիբեկ Եղիազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԶԱՆԻԲԵԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Զանիբեկ Եղիազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ